# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

# ՃԱՇՈՑ-ԳԻՐՔ.

Հնագոյն ընտիր ընտիր ձեռագիր Աստուածաշունչներէն և Ճաշոցներէն կարի զգուշութեամբ ուղղագրուած՝ Մայր Աթոռոյս տպարանէն լոյս տեսաւ այս Ճաշոց-գիրքը, որոյ նաև նոր տառից և յստակ տպագրութեան գեղեցկութեան՝ անշուշտ եմք թէ ամէն ոք կհաւանի և կը վկայէ:

Մեր Եկեղեցւոյ Պաշտօնէից դիւրութեան համար՝ Ճաշոցի մէջ իւրաքանչիւր աւուր տօնից և հանդիսից հրահանգաց շատերուն մէջ բաւական պարզ բացատրուած խրատներ և հրահանգներ յաւելցած են, ինչպէս ճառերն ևս ձեռագիր ճառընտրաց համաձայն սրբագրուած:

## Ջ. Ա. Մ. Բ. Ռ.

Բազմարդիւն և արժանայիշատակ Սիմէօն Կաթուղիկոսի աշխատասիրած այս պատմական և հնաքննական գիրքը ի լոյս ընծայեցաւ Մայր Աթոռոյս տպարանէն:

Բովանդակութիւնն է հակիրճ Եկեղ. պատմութիւն Հայոց, Էջմիածնի բազում անցից և աղետից նկարագիրը, Սոյ, Աղթամարի և Գանձասարի՝ ինչպէս նա և Պօլսոյ մի քանի Պատրիարքաց ընթացից վերայ ժամանակակից նշանաւոր տեղեկութիւնք, Էջմիածնի կալուածներ և հրովարտակք և այլք յակնէ յանուանէ, ոմանց Վանօրէից, Վիճակաց, և Նուիրակական տնօրէնութեանց վերայ ծանօթութիւնք, միանգամայն իւր գործառնութեանց պատմութիւնք:

Սոքա բոլորն տեղեկութեան և ուշադրութեան արժանի պարունակութիւնք լինելով, մանաւանդ Սոյ և Էջմիածնի իրաւասութեան դէմ. նկատմամբ ներքուստ և արտաքուստ լարուած մեքենայութիւնք ներկայ ժամանակիս հետ բաղդատելոյ համար, անհրաժեշտ էր այսպիսի մի ընտիր հնութիւնք հաղորդել Ազգիս:

Գինն է առանց ծախուց ճանապարհի Դ ռուբլի: